18.01.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ վարչապետի 2021 թ.
հունվարի 18-ի N 30 - Ա
որոշման

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ

NN ը/կ	Միջոցառումը	Նպատակը	Վերջնաժամկետը	Պատասխանատու մարմինը/համակա-տարող մարմինը
1.	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ	Վերաբերելի իրավական ակտերի վերլուծության, համադրման և խնդիրների վերհանման արդյունքում մշակել իրավական փոփոխությունների ամփոփ նախագիծ՝ հիմնված միջազգային առաջատար փորձի և առկա միջազգային չափանիշների վրա: Մշակված իրավական ակտերով ապահովել իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման գործուն մեխանիզմներ:	2021 թ. մարտի առաջին տասնօրյակ	ՀՀ արդարա-դատության նախարարություն
2.	«Իրական շահառուների վերաբերյալ հայ-տարարագրի ձևը, լրացման և ներկայաց-ման կարգը հաստատելու և ՀՀ արդարադա-տության նախարարի 2020 թվականի փետրվարի 5-ի N 36-Ն հրամանն ուժը	Օրենսդրական փոփոխությունների համատեքստում փոփոխել նաև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձևը, լրացման և ներկայացման կարգը:	2021 թ. հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ արդարա-դատության նախարարություն

	կորցրած ճանաչելու մասին» ՀՀ արդարադատության նախարարի հրամանի հաստատում			ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)
3.	«ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 408-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ	իրական շահառուների վերաբերյալ հրապարակման ենթակա տվյալների օրենքով սահմանում	2021 թ. հուլիսի երրորդ տասնօրյակ	ՀՀ արդարադատության նախարարություն
4.	Իրական շահառուների առնչությամբ փոփոխված օրենդրության վերաբերյալ հանրային իրազեկման միջոցառումների իրականացում	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքից բխող փոփոխությունների, հայտարարագրերի ներկայացման, լրացման կարգերի, իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր չներկայացնելու դեպքում առաջացող պատասխանատվության վերաբերյալ հանրության իրազեկվածության բարձրացում	2021 թ. սեպտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀՀ արդարադատության նախարարություն
5.	Իրական շահառուների գրանցամատյանի էլեկտրոնային ծրագրային ապահովման գործարկում	իրավաբանական անձանց իրական շահառուների թափանցիկության ապահովման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների ներդրում	2021 թ. հոկտեմբերի առաջին տասնօրյակ	ՀՀ արդարադատության նախարարություն Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ

6.	Հանրային ծառայությունների կարգավոր-վող ոլորտում գործունեություն իրականաց-նող և տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց իրական շահառուների հայտարարագրերի ներկայացում	ընդունված իրավական ակտերի հիման վրա հանրային ծառայությունների կարգավորող ոլորտում տեսալսողական մեդիածառայություն մատուցող իրավաբանական անձանց իրական շահառուների թափանցիկության ապահովում	2021 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀՀ արդարա-դատության նախարարություն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով (համաձայնությամբ)
7.	ՀՀ տարածքում գրանցված բոլոր իրավաբա-նական անձանց իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրերի ներկայացում	Ապահովել օրենսդրական և տեխնիկական անհրաժեշտ միջոցները, որոնք հնարավորություն կտան բացահայտել իրավաբանական անձանց իրական շահառուներին:	2022 թ. դեկտեմբերի երրորդ տասնօրյակ	ՀՀ արդարա-դատության նախարարություն Պետական կառավարման համակարգի մարմիններ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ